

ներ ու գործիքներ: Արհեստավորներն աշխատում և արտադրում են որոշակի կազմակերպված ու կազմակերպված ընկերություններում և աշխատանքի ներքին բաժանմանը համապատասխան, ռեզիմենտավորված ժամանակահատվածում: Տնտեսական այլ զբաղմունքներից զրեթե լիովին ազատ, արհեստավորներն արտադրում են, նախ, պատվիրատուի հումքով՝ նրա համար, ապա նաև ձեռքբերովի հումքով՝ քաղաքային ու գյուղական, հիմնականում ավանդական կենցաղից բխող շուկայական մարտավարության պահանջմունքները բավարարելու համար: Նրանց ապրուստի հիմնական միջոցն արտադրանքի դիմաց ստացված եկամուտն է: Առավելապես օգնականներով ու աշակերտներով, ինչպես և միայնակ աշխատող արհեստավորները հանձնին համբարությունների ձեռք են բերում ներքին ինքնավարութուն, սովորութային իրավունքով սահմանված կարգ և, ի դեմս տեղական ու պետական մարմինների, ստանձնում հարկային ու այլ կարգի պարտականություններ ու պարտավորություններ:

8. Այս բնութագրերը հասկեցնում են նաև արտադրութայն մեկ ձևից մյուսին անցնելու ընթացքում դրանց վրա հիմնվող կամ դրանցից անջատվող արտադրութայն անցողիկ կամ միջանկյալ ձևերի էական բնորոշումները, անվանումներն ու համապատասխան տերմինները /խան, արհեստանոց, գործատուն, ձեռնարկություն, մանուֆակտուրա, գործարան ևն /:

Հ. Ե. ՍԻՄՈՆՅԱՆ

ԵՊՀ

ԱՐԽԻՎԻԲԵՐԴՅԱՆ ՄՇԱԿՈՒՑՅԻ ԹԱՂԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

/Վերին Նավեր դամբաղաշտի պեղումների լույսի ներքո/

1. Ցուրածանշյուր կոնկրետ հնագիտական մշակույթի բնորոշ էթնոման ձեսի խտորեն սահմանված կարգ ու կանոն, կազմված արարողությունների հաջորդական, ժամանակի հավասարիքներով պատճառաբանված ընդհանրությունից: Այն իր ամբողջութայն մշակութային առավել կայուն և բնորոշ հատկանիշներից է, տարբերվում է մյուս մշակութային էթնոման ձեսերից, թեև դրա առանձին տարրեր կարող են պահպանվել և արտացոլվել հաջորդող մշակութային էթնոման ձեսերում:

2. Կարմիր սրդյան մշակույթի /XXIII - XVIII դդ. մ.թ.ա./ հուշարժանների մեծամասնությունը /70% / կազմում են

դամբարանադաշտերը և առանձին դամբարանաբլուրները: Դամբարանների կառուցվածքը.

ա/ Քաղումները կառարվել են բնակավայրից դուրս, հատուկ նախատեսված վայրում, ուր և ժամանակի ընթացքում ձևավորվել է դամբարանադաշտը, կազմված առանձին կամ խմբավորված դամբարանաբլուրներից: Որոշ դեպքերում դիտվում են 4-7 դամբարանների կանոնավոր շարքեր:

բ/ Դամբարանաբլուրը ոչ բարձր թմբի տեսքով ներկայացնում է դամբարանի հիմնական տիպը: Վերագետնյա հատվածը կազմված է քարահողային լիցքից՝ քարերի գերակշռությամբ:

գ/ Դամբարանթմբի պարագծով, կրա ներքո, շարված են հեռապատկրում էիններ, կառուցված անմշակ որձաքարերով, հազվադեպ՝ տուֆե մշակված քարերով: Կրում էինն ունեցել է ինչպես մոզական, այնպես էլ կառուցողական նշանակություն: Հայտնի է կրում էինի չորս տիպ.

1/ առանձին դրված քարերով բոլորակներ, 2/ սեղմ շարված քարերով բոլորակներ, 3/ ժապավենածև բոլորակներ, 4/ երկշար պատկրում էիններ:

դ/ Կրում էինների կենտրոնական մասում գտնվում են դամբարանփոսեր, ծածկված լայնակի զգված տուֆե, հազվադեպ՝ որձաքարե 1-7 սալով:

ե/ Դամբարանփոսերը փորված են հիմնահողի մեջ 30-180 սմ խորությամբ: Հավաստվել է դամբարանխցի երկու տիպ. հիմնականում հիմնահողային, մասամբ քարակղային: Հիմնահողային դամբարանխցերի մի մասի ստորին հատվածները վերին նավեր և կարմիր բերդ հուշարձաններում փորված են տուֆե ժայռի մեջ: Դամբարանխցերը հատակագծում ուղղանկյունաձև են, դեպի հյուսիս փոքր-ինչ նեղացմամբ, հյուսիսային պատը համախ ունի կիսաշրջանաձև կտրվածք:

3. Քաղման եղանակը և գույքը.

ա/ Քաղումները հիմնականում անհատական են: Հավաստվել են միասյն դիաթաղման փաստեր՝ դին հողին է հանձնվել խսրի մեջ փաթաթված, ծալված վերջույթներով, կողքի պահած /հանգիստ քնած մարդու դիրքով/, զլուխը դեպի հյուսիս: Կանանց թաղել են ձախ, տղամարդկանց՝ աջ կողքի պահած: Բ/ Քաղումն ուղեկցող զույգը սովորաբար դասավորել են հատակին, սակայն որոշ դեպքերում դրել են երկհարկ և եռահարկ, հողի շերտով միմյանցից անջատված: Այն կազմված է կավանոթներից, զարդերից, հազվադեպ՝ գեներից: Կավանոթները զբաղեցնում են դամբարանխցի հյուսիսային և կենտրոնական հատվածները, իսկ զարդերը և մյուս իրերը՝ կենտրոնական և հարավային: Կավանոթների քանակը տատանվում է 1-18, սակայն մեծ մասամբ գտնված

է 3-4 կազմանոթ, որոնք կազմում են հաստատուն համալիրներ, բաղկացած սափորից, քրեղանից և զավաթից: Վերջինս դամբարան է դրվել բերանը-սիվայր: Սափորները և քրեղանները պարուակել են մսեղեն ուտեստ: զ/ թաղման ծեսի բնորոշ հատկանիշներից է խոշոր ու մանր եղջերավոր անասունների և որսի կենդանիների զոհաբերությունը, որոնց ամբողջական կամ մասնատված վրձակում ամփոփել են դամբարաններում: դ/ Դին և թաղումնային զույքը տեղադրելուց հետո, դամբարանուցը լքորել են մանրահատիկ հողով կամ ջրիկ կավալուծույթով: Հատակից որոշ բարձրությունը դրել են առանձին մեծ քարեր կամ համատարած շերտով՝ մանր քարեր, մինչև 60 սմ հաստությամբ: ե/ Մատնոցատիպ, ,աղամանները, , հատուկ պտղաստվել են թաղման ծեսի առթիվ: Դամբարաններից մեկում հայտնաբերվել է այս տիպի շերտած անոթ: զ/ Կանանց թաղումներում դրվել են վանակատի անմշակ բեկորներ և ցլեպներ, որոնք կիրառական նշանակություն չեն ունեցել և ախտատեսված են եղել չար ուժերից դամբարանները զերծ պահելու համար: է/ Հյուսիսային կողմը կարմիրբերդցիների համար ունեցել է առանձնահատուկ նշանակություն՝ դեպի հյուսիս են կողմնորոշված ոչ միայն թաղվածների զլուխները, այլև դամբարանիցները: Ը/ Տարածված է եղել նաև կեղծ թաղման սովորույթը: թ/ Կանանց դամբարանները կառուցված են խնամքով, թաղման զույքի հարստությամբ ոչ միայն չեն զիջում տղամարդկանց թաղումներին, այլև համախ գերազանցում են դրանց:

4. Ընդհանրացնելով, կարելի է նշել, որ կարմիրբերդյան մշակույթը կրողների մեջ տարածված է եղել միասնական, բավականին զարգացած թաղման ծես: Եիսական շերտավորումներ թաղումներում չեն դիտվում: Մասնակի տարբերությունները պայմանավորված են սեռա-տարիքային առանձնահատկություններով, մահվան երևույթի պատճառով ու վայրով: Հասարակության զույքային և սոցիալական շերտավորումը թաղման ծեսում թույլ է արտահայտված: Համեմատաբար հարուստ և աղքատ դամբարանների միջև միասնական ծեսը վկայում է կարմիրբերդյան մշակույթը կրողների էթնիկ և ինչքային համասնությունը: